<p>(Original language)</p>	<p>Նկարահանում՝ «Զվարթնոց» օդանավակայանի մերձակայքում՝ Մուսալեռում: Կադրում՝ վերելք եւ վայրէջք կատարող ինքնաթիռներ, որոնց նկարում է աղջիկը, որի հոբբին plane-spotting-ն է:</p> <p>0.26–1.00 Անուշ Լալայան . «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ—Ինքն էլ է Էյրբաս, վստահաբար, ու շատ-շատ սիրուն է: Երբ որ ինքնաթիռն անցնում է գլխիս վերելով, ինձ համար ոնց որ ամբողջ աշխարհը կանգնի, ամբողջ ժամանակը կանգնի, ու ես զգամ ինչքան փոքր եմ՝ համեմատած այդ ինքնաթիռի:</p> <p>Երբ որ ինքը բարձրանում է իմ գլխի վերելով, ես միշտ մտածում եմ, որ ինչ-որ մարդիկ ճամփորդում են նրանով, կամ ինչ-որ նոր երկիր են տեսնելու, կամ նոր կյանք են սկսելու:</p> <p>Նկարահանում՝ ՀՀ նախագահի նստավայրում՝ Բաղրամյան 26-ում 01.06 -01. 35 Նելլի Վալտեր , «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ- Ճանապարհորդությունը սկսվեց 2017թ մայիսին, երբ որոշեցի, որ պետք է մեկ տարի ճանապարհորդեմ աշխարհի շուրջ:</p> <p>Սկսել եմ Նյու Յորքից, շրջել եմ ողջ Հյուսիսային Ամերիայում, հետո Հարավային Ամերիկայի տարբեր երկրներում, մի պահ եկել էի Հայաստան, որպեսզի արդեն հետ վերադառնայի Ամերիկա, որտեղից էլ արդեն ճանապարհորդությունը պետք է գնար Նոր Զելանդիա, հետո դեպի Ասիա, բայց, ինչպես պարոն Փաշինյանն է ասում, խցանվեցի Հայաստանում:</p> <p>01.36 -01.42 Կադրում՝ 2018թ սեպտեմբերի 21. ՀՀ նախագահի նստավայրի այգու մուտքը դառնում է ազատ բոլորի համար:</p> <p>01.47-02.02 Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը 2018թ մարտի 31-ին -Այսօր ես իմ քայլն եմ անում ընդդեմ Սերժ Սարգսյանի երրորդ ժամկետի եւ ընդդեմ ՀՀԿ-ի: Եւ այսօր ես սկսում եմ քայլարշավ Գյումրիի Վարդանանց հրապարակից դեպի Երեւան, դեպի Ազատության հրապարակ:</p> <p>Նկարահանում՝ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գրասենյակում, որտեղ կայացվել է քայլերթի որոշումը</p> <p>02.03-02.14 Տրդատ Սարգսյան «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ- Մարտի 31-ին, երբ տանից դուրս էինք գալիս եւ գնում դեպի Գյումրի քայլելու, հստակ ասացինք, որ հեղափոխությունից հետո նոր կվերադառնանք տուն:</p> <p>Նկարահանում՝ Երեւանի Կոնսերվատորիային կից այգում</p> <p>02.24 -02.39 Արսեն Խառատյան , «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ- Կար շատ հստակ ընկալում, որ սա արժանապատվության խնդիր է. Սերժ Սարգսյանն ինքը արժանի չի , որ ինձ ներկայացնի: Իսկապես այդպես՝ երբ որ դու զայրանում ես այնքան, որ պարտադրում ես քո իրավունքը:</p> <p>Նկարահանում՝ ՀՀ պետական վերահսկողության ծառայությունում, որի ղեկավարը Դավիթ Մանասարյանն է:</p>
----------------------------	---

02.41 -03.10 Դավիթ Սանասարյան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / իրավագետ- Ասում էին, դե Մերժն այնքան ուժեղ է, որ չի լինելու, հակակշռող ուժ չկա: Ես բոլորին ասել եմ, որ հակակշռող ուժը հենց ամեն մեկն է, եւ հակակշռող ուժն հենց ժողովուրդն է : Ուղղակի ժողովրդին պետք է տալ այն այլընտրանքը, որ իրենք հատակ հասկանան, որ գնում են փոփոխության եւ մեզնից է կախված: Ու ես ասում էի, որ այդ հնարավոր է:

Նկարահանում՝ Երեւանի Սիրիահարների այգում եւ Ռեստարտ ուսանողական նախաձեռնության գրասենյակում:

03.12- 03.29 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող - Մի հատ պրոցես է քո մոտ գալիս, որ դու հասկանում ես, որ այդ շրջակա միջավայրը որ կա, դու իր հետ ներդաշնակ չես: Երբ որ դու զգում ես, որ դու չես կարող հանդուրժել, հաշտվել այդ անարդարության հետ եւ ուզում ես ինչ-որ բան անել, այդ ժամանակ գալիս է՝ ի՞նչ թայմ դու ունեւորւթ:

03.03.36 Ուսանողներ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում, որոնք վանկարկում են՝ դասադուլ, դասադուլ:

03.45 -04.19 Նելլի Վալտեր -«Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ- Ընկերներիցս մեկը՝ այժմյան Սփյուռքի նախարարը, ինձ հրավիրեց իրենց հերթական հանդիպումներից մեկին, որի ընթացքում արդեն քննարկվում էր 14+4 ինիցատիվան, որը հետագայում վերածվեց «Իմ քայլը» նախաձեռնությանը ու նաեւ հեղափոխությանը. այնտեղ քննարկվում էր ինչ քայլ կարելի է անել. ինչ պետք է անել, որպեսզի ինչ -որ բան փոխվի երկրում, եւ այդ իդեան այն ժամանակ ոչ ռեալիստական, բայց գոնե ռոմանտիկ ու սիրուն համարեցի եւ միացա այդ շարժմանը:

04.20-04.36 Տրդատ Սարգսյան «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ- Քայլելու գաղափարն առաջացել է Սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանի մոտ, հետո այդ ծրագիրը ներկայացվեց վարչությանը հենց այս սենյակում. վարչությունը հավանություն տվեց, հետո սկսվեցին նախապատրաստական աշխատանքները, դա երեւի մարտի սկիզբն էր արդեն:

Կադրում՝ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գրասենյակ՝ Նիկոլ Փաշինյանի սենյակը ապրիլյան հեղափոխության օրերին:

04.38 -05.13 Դավիթ Սանասարյան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / իրավագետ - Մեկնարկի նախորդ գիշերը մենք հանդիպել ենք եւ պայմանավորվել ենք, որ համագործակցում ենք, իրար հետ խորհրդակցելով՝ միասին կազմակերպում ենք հետագա աշխատանքները: Մի քիչ բանավեճ տեղի ունեցավ այդտեղ, ես ունեի իմ դիրքորոշումը, որ չպետք է մենք խոսենք հակաբռնության մասին, մենք պետք է խոսենք գուտ, որ խաղաղ է լինելու պայքարը, իսկ Նիկոլ Փաշինյանն ասում էր՝ չէ, հենց այդ էլ պետք է շեշտենք, որ չի լինելու որեւիցե հակաբռնություն: Ու ես կարող եմ ասել, որ պրակտիկայում ես ընդունեցի, որ ինքն էր ճիշտ:

05.13-05.20 Ակցիա. Լսվում է՝ Մերժին ասում ենք՝ ոչ: Ոչ, ոչ, ոչ, ոչ: Մերժիր

Սերժին, Մերժիր Սերժին:

05.20 Նկարահանում Դավիթ Պետրոսյանենց տանը

05.23- 06. 03 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող Հավաքել եմ/ ցույց է տալիս դրոշմանիշներն ու տարբեր երկրների արժույթները/ 13-ից մինչև 16 տարեկանը: Սրանք փողեր են, հունական է, սրանք հայկական են, մենք ենք սարքել, այս էլ հին ռուսական ցարական փողեր են: Պատմությունը սիրում էի , հետո հնագիտությամբ էի ես հետաքրքրված. այստեղ ես ունեմ այդ բաները, հիմա ցույց կտամ ձեզ, տեսնեմ որտեղ է, այս ինձ նվիրել են պեղումների ժամանակ, ոսկորներ են:

06.04-06.20 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող -Ես փոքր ժամանակ սկզբում զինվորական էի ուզում դառնալ,հետո ֆուտբոլիստ, հետո հնէաբան, իսկ հիմա այդպես վերջնական չեմ կողմնորոշվել: Տենանք, ոնց կստացվի:

06.23 Նկարահանում Ռեստարտ նախաձեռնության կենտրոնում

06.23-07.13 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող - Առարկա ունենք համալսարանում, որ վեց ամիս այստեղ ես, վեց ամիս Վրաստան, Ուկրաինա կամ Բելառուս: Տղաներից մեկը, որ Վրաստանի հայ է, որն եկել է այստեղ այդ առարկայով, ասաց ձեզ մոտ գոնե զուգարանի թուղթ չկա: Ու մեզ մոտ այդ` զուգարանի թղթի ակցիայի միտքը եկավ: Ինչ է ինքը ցույց տալիս, առաջին հայացքից ասում ենք` հա զուգարանի թուղթ է, բայց ինքը խոսում է համալսարանում արժանապատիվ պայմանների գոյության մասին, ինքը խոսում է համալսարանում ուսանողի զուտ հարմար տարածքի մասին, էթե դու, օրինակ, չես կարողանում օգտվել այդ առաջին անհրաժեշտության առարկայից, շատ բարդ է պատկերացնել, որ այդ համալսարանը , օրինակ, ուսանողի երկրորդ տունն է, ոնց որ հաճախ մենք ասում ենք: Ինքը խորհրդանշում է ռեսուրսների ծախսման մասին, ինչպես է ռեսուրսները ծախսվում, օրինակ , համացանցում գրված է, որ 170 դրամ է այդ զուգարանի թուղթը ու այդ թուղթը չկա:

07.13 – 07.28 Կադրում զուգարանի թղթի ակցիա ԵՊՀ բակում

07.20 -07. 36 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող Ուսանողները հանդիսանում են Հայաստանի հասարակության մի հատված, ովքեր դժգոհ էին երկրում իրավիճակից ու ցանկանում էին իրենց մասնակցությունն ունենալ: Կոպիտ ասած` Հանրապետական կուսակցությունը բոլոր նախադրյալները ստեղծեց, որ մենք լավ կազմակերպեինք դասադուրը:

07.38-07.52 Կադրեր ակցիայից` Լսվում է `Տարկետում լինելու ա, Դասադուր:

07.40-07.45 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող - Մենք ուզում ենք հանդիպել ԿԳ նախարարի հետ:

07.48 Լսվում է՝ Ազատ, անկախ ուսանող

07.53 -08.00 Կադր քայլերթից՝ զրույց մասնակիցների միջև

Նիկոլ Փաշինյան, «Իմ Քայլը» նախաձեռնության առաջնորդ- Ողջունում ենք ժողովուրդ

Մյուսներ- Ողջույն.

Արարատ Միրզոյան, «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ – Ողջ ենք մնացել Ջաջուրից հետո:

08.00-08.15 Տրդատ Սարգսյան «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ Ջաջուրում գիշերակացն էր երեւի ամենադաժանը քայլերթի ընթացքում: Ստածում էինք՝ այս գիշեր եթե հաղթահարենք, ուրեմն հեղափոխությունը միանշանակ կհաջողվի: Այդքան ցուրտ էր այդ օրը:

08.17 -08.36 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ -Երբ որ մենք «Մերժիր Մերժին» նախաձեռնությամբ սկսեցինք մեր ցույցերը, ես առավոտյան լսեցի, որ Նիկոլ Փաշինյանը պետք է դուրս գա քայլարշավի, ես ամբողջ սրտով մինչև գիշերվա հազարը , երբ նրանք Ջաջուր գյուղում էին, զանգում էի ընկերներին եւ ասում էի՝ խնդրում եմ, եկեք գնանք միանանք:

08.38 -08.42 Կադրում՝ ակցիա, լսվում է՝ «Մերժիր Մերժին», «Մերժիր Մերժին», «Մերժիր Մերժին»

08.43 -09. 00 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող Երբ որ «Մերժիր Մերժին» նախաձեռնությունն իր ակցիաները սկսեց Երեւանում, «Քաղաքացիական Պայմանագրի» թիմը, ընդ որում՝ ճանապարհին շատ մարդիկ իրենց միացան, սկսեցին Գյումրիից գալ, այսինքն զուգահեռ պրոցեսներ էր:

09.10-09.24 Նելլի Վալտեր «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ- Ես ամեն տեղ , ամեն երկրում, ամեն քաղաքում , թե Հայաստանում, որ իմ ծննդավայրն է, թե Եվրոպայում, թե Հարավային Ամերիկայում, թե Ասիայում ես ինձ զգում եմ՝ ինչպես իմ տանը:

09.29 -09.35 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ

Ինձ թվում է՝ իմ ընկերներն ինձ լավ գիտեն, որովհետեւ ես միշտ բաց եմ եւ միշտ ամեն ինչի մասին ասում եմ: Ես շատ քիչ գաղտնիքներ ունեմ;

09.36 Կադրում՝ Անուշ Լալայանը փակում է արագաչափը

09.50- 11.05 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ- Մենք որոշեցինք ու հասկացանք, որ ինչ-որ բան պետք է անենք, որ մարդիկ անընդհատ մեր մասին խոսեն, որ մարդը մարդուց խոսակցությունը շարունակվի, եւ լիքը մարդիկ իմանան, որ այսպիսի բան է նախաձեռնվում:

Ունեցել ենք մի քանի տարբերակ անելու, չորս ընկեր ենք եղել ու վերջում եկել

ենք այն եզրահանգման, որ պետք է հենց Մերժ Սարգսյանի ընտանիքի գրպանին կպնենք, որը հենց արագաչափ փակելն է, ու ուշադրությունն ավելի շատ կգրավվեր, քան թե ինչ-որ ուրիշ ակցիան:

Մենք արեցինք գիշերով, եւ ինչու հենց վարտիքով, ինձ թվում է, բոլորին շատ լավ հասկանալի է, քանի որ մարդկանց թողել են միայն վարտիքով եւ մենք վերջին վարտիքն էլ սվեցինք:

Գնացի աշխատանքի, մայրիկդ զանգահարեց, ասաց ոստիկաններ են եկել մեր տուն, հինգ հոգի, հիմա գալիս են քո աշխատանքի տեղ:

Զանգահարեց ինձ Նիկոլ Փաշինյանը ու ասաց, որ ոստիկանական ցանկացած ճնշում անպատիժ չի մնալու եւ ամեն ինչ կանենք, որպեսզի ոստիկանները քեզ այլևս չանհանգստացնեն: Ու որոշեցինք այսպիսի մի բան, եթե ինչ-որ ակտիվիստի կպնի ոստիկանությունը, Նիկոլ Փաշինյանը կամ արագաչափը կփակի, կամ կփակի ճանապարհը:

11.05 Կադրում Նիկոլ Փաշինյանը փակում է արագաչափը

11.06- 11.22 Նիկոլ Փաշինյան- Սիրելի հայրենակիցներ, մենք իրականացրինք այս ակցիան ի պաշտպանություն քաղաքացիական այն ակտիվիստների, ովքեր իրենք էլ այս արագաչափերի դեմ գործողություն էին իրականացրել եւ հետապնդման էին ենթարկվել ոստիկանության կողմից:

11.23- 12.10 - Դավիթ Սանասարյան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / իրավագետ -«Մերժիր Մերժին» -ի ժողովրդով գնացինք «Իմ քայլի» ժողովրդին հանդիպելու Հրագրանում, որ ամբողջ ճանապարհին դնում էինք այդ ստվարաթղթից պատրաստված «Մերժիր Մերժին» նշումով հարմարանքները, որ փակենք արագաչափերը ու շատ ուժեղ քամին էր: Քամին էր տանելու այդ կամ գալու, հանելու էին ու ինչ արեցինք՝ մի հետաքրքիր բան՝ քառտիկ իրավիճակ: Չենք ասում, ու քառու պետք է ստեղծենք, քառտիկը այդ գործողություն է. եւ ինչպես արեցինք... Գրում էինք ֆեյսբուքում՝ Արարատի մարզ, բայց մենք Հրագրանում էինք, 15 րոպե հետո նոր արագաչափ էինք փակում, գրում էինք՝ Վայոց ձոր, ու ոստիկանությունը, վստահեցնում են, չեն հասկացել՝ որտեղ է այդ ամեն ինչը: Մտածել են, որ մենք դեպի Սյունիք ենք գնում:

12.13 – 12.23 Նիկոլ Փաշինյան - Սիրելի ժողովուրդ, այսօր ապրիլի 13-ն է՝ մեր քայլարշավի 14 –րդ օրը, եւ մենք գտնվում ենք Երեւանի մատույցներում: Եւ այսօր մտնում ենք մայրաքաղաք Երեւան

12.28 Կադրում՝ Ազատության հրապարակ, Լսվում է կոչ՝ Մեզ սպասում է Ազատության հրապարակը , երգից կտոր՝ «Ես մենակ չեմ, ես մենակ չեմ...»:

12.38 -13.10 Նելլի Վալտեր «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ - Ինքաբուխը նկարագրում է այս հեղափոխությունը, նույնիսկ քաղաքական քայլերն էին շատ ինքնաբուխ ողջ ընթացքում: Իհարկե պլանավորված էլ էր, բայց ոչ հեղափոխություն: Պլանավորված էր քայլել, դեմ գնալ ռեժիմին, դեմ գնալ Մերժ Սարգսյանի որպես վարչապետ ընտրվելու հանգամանքին, փոխել քաղաքական վիճակը, բայց որ դա կվերաճի հեղափոխության, դա հաստատ պլանավորված չէր:

13. 11- 13.20 Անուշ Լալայան «Մերժիր Սերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ - Առաջին ցույցին, երբ որ մենք գնացինք, համոզված էի, որ 100 տոկոս մենք հաղթելու ենք: Չգիտեմ՝ ինչպես, բայց հաղթելու ենք:

13.30 -13.54 Տրդատ Սարգսյան «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ- Երբ քայլերթի ծրագիրը կար, և մոտավոր՝ Մխիթար Հայրապետյանը ասաց քայլերթի արդյունքում հրավիրված հանրահավաքին կմասնակցի 4-ից 5 հազար մարդ, առավելագույնը իրազեկման 14-օրյա գործընթացից հետո, այդ ժամանակ պարոն Փաշինյանն ասաց՝ եթե 4000-5000 մարդ գա Ազատության հրապարակ, ապա ես հեղափոխությունը կհասցնեմ իր ավարտին, դա եղել է մարտ ամսվա սկզբին:

13.55 -14.06 Նիկոլ Փաշինյանը՝ առաջին միտինգի ժամանակ – Իրար մեջքը պինդ բռնած կանգնում ենք, եւ նրանք մեր աչքերի մեջ պետք է տեսնեն Սերժ Սարգսյանի պարտությունը:

14.07 Հավաքվածները արձագանքում են՝ այո~:

14.10-15.24 Նելլի Վալտեր «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ Եթե երեւէ ինձ կյանքում հարցնեն երբեւէ զգացել ես վախ կամ վտանգ, իրական վտանգ, ես կասեմ, որ զգացել եմ Մատչու Պիչուից հաջորդ քաղաքը գնալու ճանապարհին, երբ որ մենք գնացք բաց էինք թողել ու կամ ստիպված պետք է այդտեղ գիշերեինք, որտեղ ոչ մի բան չկա. ինչ-որ գյուղ է բավականին բարձր հարթության վրա, ցուրտ եւ պատրաստված չէինք: Կամ ընտրում էինք երկրորդ տարբերակը՝ ջունգլիի միջով ոտքով քայլել հաջորդ գյուղ, որտեղ կարող էինք տաքսի վերցնել ու գնալ ուրիշ քաղաք: Վեց հոգով էինք, եւ գիշերվա ժամը երեքին հեռախոսի լույսի տակ, ջունգլիով արագ զինվորականի պես քայլելով երեք ժամ, հասել ենք հաջորդ գյուղը: Եւ երեւի կյանքում առաջին անգամ ռեալ վտանգ, որ կյանքս կարող եմ կորցնել տարբեր պատճառներով կամ ինչ-որ վայրի կատաղած կենդանիների, կամ օձերի, կամ այդ կարգի ինչ-որ բաների պատճառով ու նաեւ այնտեղ ապրող մարդկանց պատճառով, որովհետեւ գիշերվա ժամը երեքին տուրիստները գործ չունեն ջունգլիում, ու եթե ինչ-որ մեկին հանդիպեինք, չգիտեմ ինչ ավարտ կունենար:

15.28-15.37 Անուշ Լալայան «Մերժիր Սերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ - Ես կյանքում ոչ մի բանից չեմ վախենում, բացի այդ պաուկներից ու այդ կենդանիներից՝ բլոճներից:

15.38 Կադրում՝ ցուցարարներն մտնում են Հայաստանի հանրային ռադիոյի շենք:

15.42-16. 32 Անուշ Լալայան «Մերժիր Սերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ - Ի սկզբանե ուրոշել էինք, որ պետք է մտնենք ռադիոտուն: Բայց ես չգիտեի, որ մասնակցությունս պետք է ունենամ: Մեր ընկերներից մեկն եկավ՝ ասաց, թող բոլորը գործերդ , գնում ենք: Առանց հարցեր տալու՝ գնացի: Հետո ասաց՝ գնում ենք ռադիոտուն:

Երբ որ մի խումբ մարդկանց մեջ ազատ տարածք է լինում, բոլորը շարժվում են այդ ուղղությամբ: Ես արագ ճողոպրեցի, բարձրացա վերեւ եւ վիկտորիա

ցույց տվեցի, որ այդտեղ եմ: Ոստիկանը իմ հետեւից եկավ եւ վրաս գէնք պահեց: Այդ պահը ինձ համար ամենաերկար պահերից էր կյանքումս, երբ որ վայրկյանը բռպե էր թվում: Ես նայում էի, ու չէի հավատում, որ ինքը կկրակի: Ինքն էլ էր իրականում վախեցած: Հետո ակտիվիստներից Նարեկ Ղահրամանյանն եկավ եւ ինձ գրկեց, տարավ այդտեղից, հետո եկավ Նիկոլ Փաշինյանը եւ ասաց, թե կրակելու ես՝ իմ վրա կրակի, որովհետեւ ես եմ ամեն ինչ սկսել:

16.39-17.08 Արսեն Խառատյան , «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ -Փողոցը որպէս մեթոդ պայքարի գիտեմ այնքան ժամանակ, ինչ ինձ հիշում եմ:Ասում էինք, եթե դու անձամբ լավ ես ,դա չի նշանակում որ բոլորն են լավ: Սոցիալական պատասխանատվություն էինք քարոզում ,այսինքն կռիւկտիվ մտածել էինք ուզում :Ուզում էինք , որպէսզի ակտիվ քաղաքացի ունենանք, մարդ ունենանք, որն ըմբոստ է կամ իր ըմբոստությունը ռիսկով կարա ցույց տա, այսինքն՝ թույլատրելիության տարածք: Ազատության կռիվ էր:

17.15-17.22 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ -Ամսի 12-ի ակցիային մենք ութ հոգով փակեցինք Մաշտոցի պողոտան. 40 բռպե չէինք թողնում, որ որեւէ ավտոմեքենա անցնի:

17.23 Կադրում՝ փողոցը փակելու ակցիան, երբ ոստիկանները տանում են Անուշին, վերջինս ասում է՝ Ոտքերիցս բռնեք:

17.32 Դավիթ Մանասարյանը ակցիայի ժամանակ վանկարկում է՝ Ոստիկան, միացիր, ոստիկան միացիր:

17.37 -18.00 Դավիթ Մանասարյան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / իրավագետ – Որեւիցե հեղափոխություն ինչ-որ պահի ազդեցության տակ չի: Ցանկացած նման պրոցեսներ նախորդ պրոցեսների շարունակությունն են ապահովում: Եթե ասենք, որ մենք մի ամսում հեղափոխություն արեցինք, սուտ կլինի:Այդպէս չի: Նախորդ բոլոր պայքարները՝ անկախ նրանից, թե ով է արել, տվել է դրական արդյունք:

18. 01 -18.18 Կադրում՝ ակցիա, բերման են ենթարկում երիտասարդներին, բերման ենթարկվող աղջիկն ասում է՝ բարեւ ձեզ:

18.18-18.40 Տրդատ Սարգսյան «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ -Այս հեղափոխությունը երևի թե ոչ մեկին չարժե վերագրել. տարբեր խմբերի, հեղափոխությունը կատարել է հայ ժողովուրդը, եւ մեր Քաղաքացիական պայմանգիր կուսակցությունը չի կատարել հեղափոխությունը, այլ ընդամենը կազմակերպել ու գործիքն ա եղել ժողովրդի ձեռքին:

18.45-19.14 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ- Քանի որ մենք համոզված էինք,որ Մերժ Սարգսյանը վարչապետ դառնալու՝ այդ քայլին չի գնա, վերջիվերջո կհասկանա իր սխալը, ինքը մնալու է առանց գործի: Ու ոնց կարող է մարդն առանց գործի ապրել: Մենք ու բոլորեցինք թոշակով,մի x գումարով օգնել մարդուն, որ խողճ մարդը կարողանա ապրի: Որոշեցինք անել մեր դրամահավաքը բացառապէս 10-20

դրամներով, որովհետեւ ինքը մենակ դրան էր արժանի... Բայց մարդիկ այնքան լավ էին վերաբերում, իրենք բացի այդ գումարից ուրիշ բաներ էին լցնում, լցնում էին պոնչիկ, պերաշկի:

19.15 Կադրում՝ Օգնիր Մերժին գնալ թոշակի ակցիայից; Լսվում է՝ «Անտարբեր մի անցեք, Մերժիկ Սարգսյանի համար 10 դրամը մի խնայեք»:

19.24 -19.43 Դավիթ Սանասարյան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / իրավագետ – Շատերն իմիջայլոց թեթեւ էին նայում այդ միջոցառմանը, բայց մենք մի խնդիր ունեինք՝ մասնակցային դարձնել այդ վախի մթնոլորտը կոտրել, իսկ դրանով վախի մթնոլորտ կոտրվել է, ես վստահեցնում եմ: Երբ մարդ գալիս էր ասում էր՝ տաս դրամ տալիս եմ Մերժ Սարգսյանին, մենակ թե, ասում էին. թող գնա:

19.45 Ակցիա, Լսվում է տղամարդու ձայն՝ Մասնակցում են դրամահավաքին, ուրախացել են, որ Մերժ Սարգսյանը թոշակի է գնալու; Կնոջ ձայն՝ Էստի համեցեք:

19.48 Կադրում՝ Բաղրամյան պողոտա. Նիկոլ Փաշինյանը փորձում է անցնել փշալարերը:

20.05-21. 53 Կադրում՝ հեղափոխության տարբեր օրերից դրվագներ: Լսվում է՝ Քայլ արա, մերժիր Մերժին կոչը: Նիկոլ Փաշինյանը միտինգում արտասանում է իր գրած բանաստեղծությունը՝ Իմ քայլը:

Այսօր ես անում եմ իմ քայլը,
Ես անում եմ իմ քայլը այսօր,
Մա հույսի առկայծող ճանապարհ է,
Մա գրվող պատմություն է մի նոր:

Ես պարտվել եմ, պարտվել եմ քանիցս,
Եւ տեսել քմծիծաղը ստի,
Բայց իմ կամքը ամուր է քարից էլ,
Իմ ոգին հանձնվել չգիտի:

Երբ տեսնում եմ երկրիս տառապանքը,
Մտահող ճառողի փառքը սին,
Համոզվում եմ կրկին, որ իմ ջանքն է
Փակուղին ճեղքելու բանալին:

Նոր շունչ եմ ուզում ու նոր կյանք,
Հին երկրիս համար հուսահատ,
Եւ դարձնել պիտ նրան կարենանք՝
Երջանիկ, ու Հզոր, ու Ազատ:

Արդ ելել եմ, գտել եմ ժպիտս,
Եվ ձեռքերս բաց՝ պարզել վեր,
Որ լույսի մարտնչող ասպետի պես,
Կերտեմ ցնծության ժամը մեր:

Եւ մենակ չե՛մ, մենակ չե՛մ, մենակ չե՛մ:
Քայլում են, քայլում են, քայլում՝ մ,
Ու մեր մեկտեղվող աչքերի մեջ,
Հույսի արեգակ է փայլում:

Այսօր մենք անում ենք մեր քայլը,
Մենք անում ենք մեր քայլը այսօր,
Սա պատվով քաղցրացած ճանապարհ է,
Սա ծնվող հաղթանակ է մի նոր:

21.55 -22.20 Դավիթ Պետրոսյան «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնության անդամ/ ուսանող - Ես որ ճիշտն ասեմ, սկզբից մի քիչ թերահավատ եմ եղել, հատկապես որ այդ հնարավոր է ամեն ինչը անել խաղաղ ճանապարհով: Ես մինչև վերջին օրն էլ չէի հավատում, որ ստացվելու է, այ երբ որ կոնկրետ ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանը ընտրվեց վարչապետ, ես նոր ասացի՝ ստացվեց: Մինչև այդ՝ նույնիսկ հրաժանականի օրը ես լիարժեք երջանիկ չէի:

22.22 Կադրում՝ արվեստանոց, Անուշ Լալայանը նկարում է տիեզերանավ:

22.23 -22.34 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ- Փոքր ժամանակ միշտ երազել եմ տիեզերագնաց լինել: Միշտ մտածում էի, երբ որ մեծանամ, առաջինը Մարսի վրա ես եմ ոտս դնելու:

22.40 Կադրեր Նախագահի նստավայրում:

22.40 -23.02 Նելլի Վալտեր «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ Հայաստանը մինչև հեղափոխությունը, ես հիշում եմ՝ հաճախ էի գալիս ու ամենաառաջին բանը, որ աչքիս տեսանելի էր լինում, միշտ անգունություն էր: Հայաստանը ինձ համար մոխրագույն երկիր էր: Հեղափոխությունից հետո Հայաստանն ինձ համար դարձել է սարյանական դեղին, թե ինչքան ժամանակ այդպես կմնա, չգիտեմ, բայց վառ ինտենսիվ դեղին:

23.03-23.50 «Ռեստարտը» իր առջև դրված նպատակներին դեռ ամբողջովին չի հասել ու հեղափոխական պրոցեսը «Ռեստարտի» գործունեության ամենահամով, լավ էջերից է, բայց ոչ վերջինը: Մենք դեռևս շատ աշխատանք ունենք անելու, քանի որ մեր «Ռեստարտի» ձեռավորման ժամանակ հայտարարված մանիֆեստի խնդիրները մենք չենք լուծել: Դա ակադեմիական ազատությունն է, կրթության որակն է, դասախոսների եւ ուսանողների համար արժանապատիվ պայմաններն են, համալսարանի

կուսակցականացվածության խնդրի լուծելը, ուսանողների դերը կառավարման հարցում մեծացնելն է: Այդ խնդիրները մենք դեռ չենք լուծել. Դրա համար «Ռեստարտը» դեռ շարունակում է իր գոյությունը:

23.50 Կադրում՝ «Ռեստարտը» քննարկում է կազմակերպել Սիրահարների այգում

23.51 -24.01 Վիկտորյա Այդինյան- փոխվարչապետի օգնական- Պետություն ենք կառուցում եւ այն պետությունը, որը մենք ենք ուզում: Այնպես որ՝ կոչ եմ անում բոլորին, անկախ դժվարություններին, եկեք կառավարություն, մեզ հետ շատ հավես է:

24.02-24.22 Անուշ Լալայան «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամ / հաշվապահ -Հեղափոխությունը դեռ նոր-նոր սկսել է. պետք է տեղի ունենա արժեքների հեղափոխություն, պետք է տեղի ունենա մարդկանց գիտակցության՝ արդեն որպես քաղաքացու, արժանապատիվ, անկաշառ քաղաքացու հեղափոխություն սկսվի իրենց մտածելակերպի եւ ապրելակերպի մեջ: Երբ որա բղեն այդ դրոյթները լինեն, արդեն կարելի է համարել, որ հեղափոխությունը ստացվել է:

24.24- 24.36 Արսեն Խառատյան , «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ -Այն պահից , երբ մենք անկարող կգտնվենք , երբ որ մեր կարիքը չի լինի, կհայտնվեն այն Դավիթները եւ մյուս ընկերները(նկատի ունի Դավիթ Պետրոսյանին որպես ավելի երիտասարդ սերունդ-խմբ), որոնք ուղղակի մեզ կհեռացնեն կամ մենք ինքներս խելոք կհեռանանք:

24.36-25.03 Նելլի Վալտեր «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ- Ամենակարեւոր բանը ոյուկզակն է. ինքը նախ քո տունն է դառնում ճանապարհորդության ընթացքում եւ երկրորդը՝ պետք է հարմար լինի, որովհետեւ շատ հաճախ սահման ես անցնում՝ 9 ժամ, 8 ժամ քայլելով: Ռյուկզակս ընկերս է եղել: Մարդիկ ինձ հաճախ հարցնում են՝ ոնց ես մենակ, մեն-մենակ ճանապարհորդում Հարավային Ամերիկայում, ամենավտանգավոր քաղաքներում եւ այլն. ես միշտ ասում էի՝ ես մենակ չեմ, ոյուկզակիս հետ եմ:

24.04-25.30 Տրդատ Սարգսյան «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / արեւելագետ -Այն քարոզը, որ եղել է ամբողջ քայլերթի, ցույցերի ժամանակ սերն է եղել դեպի հայրենիք, դեպի այն կառույցներ, որոնք պաշտպանում են մեր հայրենիքը, դեպի ոստիկանություն, և հենց դա է մեր հաջողության գրավականը եղել: Մենք ատելություն չենք տարածել, ատելություն չենք սերմանել մարդկանց մեջ, դրա համար էլ սերը հաղթեց:

25.31 Կադրում՝ Նախագահի նստավայր, պատվո պահակախումբ:

23.40 -26.31 Նելլի Վալտեր «Իմ Քայլը» նախաձեռնության անդամ / միջազգայնագետ Ինչքան ինձ հիշում եմ, երբ որ դրսում եմ եղել, երբեւէ չեմ կարեւորել, թե որտեղից եմ գալիս: Ու երբեւէ չեմ ուզեցել հատուկ նշել՝ ես Հայաստանից եմ կամ առաջին քրիստոնեություն ընդունած երկրի ներկայացուցիչ եմ կամ ինչ-որ հատուկ բան չի եղել, որ հատուկ ուզեցել եմ

	<p>նշել. բայց հիմա այդ բալանսը փոխվել է: Ու եթե շարունակեմ ճանապարհորդել, պարտադիր պետք է պատմեմ հեղափոխության մասին, պետք է պատմեմ, թե ինչ է հնարավոր անել ձեռքերը բաց քաղաքականությամբ՝ առանց ուժի գործադրման ու պետք է պատմեմ՝ ինչքան ժպիտներ եւ հույս, գույն է հաղորդել այն, ինչ մենք արեցինք այս վերջին ամիսների ընթացքում:</p> <p>Հայկական թավշյա հեղափոխության քայլերը</p> <p>Առաջին քայլը 31 մարտի , 2018թ. Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ «Իմ Քայլը» սկսեց քայլարշավ Գյումրիից</p> <p>8 ապրիլի , 2018թ. - «Մերժիր Սերժին» նախաձեռնությունը Ծովագյուղում միացավ բողոքի քայլերին</p> <p>13 ապրիլի , 2018թ. - Նիկոլ Փաշինյանը հասավ Երեւան</p> <p>15 ապրիլի, 2018թ. - Սկսվեցին անհնազանդության միջոցառումները</p> <p>23 ապրիլի , 2018թ - Վարչապետ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց</p> <p>8 մայիսի 2018թ. - Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետ</p> <p>16 հոկտեմբերի, 2018թ -Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրաժարական տվեց</p> <p>1 նոյեմբերի , 2018թ- Լուծարվեց ՀՀ Ազգային ժողովը</p> <p>9 դեկտեմբերի , 2018թ – ԱԺ արտահերթ ընտրություններ. «Իմ քայլը» դաշինքը ստացավ 70.42 տոկոս քվե</p> <p>Վերջին քայլը՝ շարունակելի....</p>
<p>CAMERA OPERATOR:</p>	<p>Sergey Khurdoyan, Bagrat Saroyan, Esayi Petrosyan, Sevak Mesropyan, Samvel Poghosyan</p>
<p>VIDEO EDITOR:</p>	<p>Artur Parsyan</p>
<p>MUSIC RIGHTS: (If applicable)</p>	<p>n/a</p>